

# ԳԱԻԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

## I

### ԵՐԿՐԱԳՈՐԾ ՓԱՄԲԱԿԵՑՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

Ճշմարտ, ամեն մի փոքր ի շատէ՝ զարգացած և շրջահասակաց մարդու պարտականութիւնն է նաեւ իր շուրջը, սուղեւ տեղի—ժողովրդի լաջող և անլաջող պալմաններէ մէջ, հանգամանօրէն նկարագրել և գրականութեան լանձնել, Հանգամանքները, մամուլն լանձնած խնդիրներէ անհետևանք մնալը, մասամբ էլ ծուլութիւնը ըստ ամենալնի ընդ միշտ անտարբեր ևն դարձնում ան մարդկանց, որոնց ուղղակի պարտականութիւնն էր տալ գրականութեանը իր շրջանին վերաբերեալ կարևոր տեղեկութիւններ: Յիշուի, անմտութիւն է մտածել, թէ երբ մի ուր և է շարույած խնդիր լուծումն չէ ստանում, ուրեմն և անլորդ է նրա մասին գրել: Ընդհակառակը, մի խնդիր, որքան շուտ-շուտ կրկնուի, անքան անլի շուտ կը մօտենալ իրագործման: Վճռել էի արդէն «Մուրճ»-ին լանձնել փամբակի վիճակի նկարագրութիւնը, երբ տոացեց խմբագրութեան կողմից իմ բարեկամ պ. Առ. Ղուկեանցին գրած ան նամակը, որի մէջ «Մուրճ»-ի պ. խմբագիրը խնդրել էր նրան տեղեկագրել իրան փամբակում գոլութիւն ունեցող թանգութեան մասին. և որովհետև անսպասելի կերպով պ. Ղուկեանցը ակամպից պաշտօնով տեղափոխեց Ռուսաստան, ուստի և բարեկամս իրան ուղղած լանձնարարութիւնը ինձ կտակեց, որով անլի ևս խրախուսեցի որպիսին ան կատարում ևմ ըստ շարու կարողութեանս:

Փամբակը գտնուում է Ղազախի, Շիրակի, Լոռայ և Ապարանի մէջ տեղում, Գիլիջանից դէպ արևմուտ գնացող խնուղին արդէն փամ-

բակի միջով է անցնում, որը տանում է Աղէքսանդրապոլ, Ղարս և այլն։ Գլխիջանի անտառի շարունակութիւնը տարածւում է նաև Փամբակի մի մասի վերայ, որը աստիճանաբար նւազելով, 55 վերտո հեռւորութեան վերայ գտնուող «Համամլի» գիւղում ծալրը վերջանում է։ Բնակիչները մեծ մասը հայեր են. կան մի քանի թուրք և երկու մալական գիւղեր. ամբողջ Փամբակում գտնուող գիւղերի («աւագ»-ը Մեծ-Ղարաքլիսան է) որը ունի մօտ 400 տուն ժողովուրդ, Տեղացիք ընդհանրապէս պարապում են երկրագործութեամբ, եթէ անասնապահութիւն չ'անւանենք ալն, որը լինում է ընտանեկան առօրեայ պէտքերի համար, ալն ինչ փորձը ցոյց է տալիս, որ անասնապահութիւնը Փամբակի մի մասում, գլխաւորապէս Մեծ-Ղարաքլիսաւում և իր շուրջը շատ լաւ կը լաջողւէր՝ եթէ մասնագիտօրէն ուշադրութիւն դարձնէր։

Փամբակի արեւելեան մասում (Ղարաքլիսան իր շրջակայքով) երկրագործութիւնը ամենեւին չ'է լաջողւում. պատճառը երկու կերպ կարելի է բացատրել. նախ հողը անհամեմատ քիչ է՝ երկրորդ՝ եղածն էլ անընդունակ պողատութեան։ Բնականաբար ամեն բան կը նւազի՝ եթէ նրան պարարտանալու միջոց չտանք. մեր ունեցած հողը անդադար մշակւում է հողի չափազանց սակաւութեան պատճառով, մեր երկրագործը ընդ միշտ վարած հողը չ'է կարողանում մի կամ երկու տարի լետածղել՝ նորից «խամացնելու», թարմացնելու համար. և ալդ ալն պատճառով, որ գիւղացին իր ձեռքում չ'է թէ աւելորդ, ալ նոյն իսկ բաւականացուցիչ հող չունի. հողն էլ սննդւելու, հանգստանալու պահանջ ունի, ալն մեր երկրագործը հող չունի՝ սրա հետ ինքն էլ ծով և անընդունակ է գէթ արհեստական կերպով եղածը պարարտացնելու. մեր անտարբեր գիւղացին անձրևի հետ տատակի, քարի և կոշտի մաքրելն անգամ բնութեան տնօրէնութեանն է լանձնում։

Որէնքի արամագրութեամբ իւրաքանչիւր ծուխ պէտք է սննեալ առ նւազն 25—30 դեմետախն հող. (մեզ չալտնի չ'է մի ալդպիտի օրէնք-Մանօթ. Խմբագր.), ալն ինչ մեր ծովը հաղիւ ունի 5—6 դեմետախն. ուտտի և պարզ է, որ ալդպիտի քանակութեան հողով երկրագործ զառնալ անհնարին կը լինի. իսկ օրէնքի ուժը հարկի վերաբերմամբ ճշդիւ կատարւում է։

Փամբակի արևմտեան մասում վարուցանքը լաջողւում է ալնքան և որքան կարելի է վճարել ճնշող պարտքի տոկոսի մի մասը. ինչ կը լինի գիւղացու գրութիւնը, երբ հողի պակասութեան հետ պարսկաբար մի քանի տարիներ հունձը անաջող լինի՝ սրա հետ և թանդութիւն բոլոր կենսական մթերքներով, իր երկրագործը, հացի միակ արտադրողը, հարկադրած լինի գրւանքաներով ալիւր գինի՝ ալն ժամանակ պէտք է խոստովանել իրականութիւնը. Վերջին պատերազմից լետու գիւղացու

դրութիւնը պարբերական դառնութեան մէջ է անցնում. էլ չկայ անցեալ անոգ և խաղաղ նահապետական կեանքը. ալսօր նա մի կերպ կեանքը քարշ է տել՝ մտածում է վաղաւ համար Զկալ «ուանչպար» որ մինչ կոկորդը թաղած չլինի պարտքի մէջ, ուստի եթէ ցանում է՝ վաշխառուինն է, եթէ կթում է իր մի կամ երկու կովը՝ նոնչպէս. եթէ խուղում է իր մի կամ երկու տաննեակ ոչխարը (խակապէս ոչխար պահելը բացառութիւն է), եթէ դրանց կաթից պանիր է պատրաստում, դարձեալ վաշխառուինն է. եթէ չարքաշութեամբ ձեռք է բերում մի քանի բուրլի, նրանով էլ տէրութեան հարկն է վճարում, եթէ միայն բաւականացնում է. հակառակ դէպքում կը ծախւի նրա «վերմակ» կապերտը կամ միակ կաթսան. միով բանիւ շատ ուրախ և անտրտունջ կը լինի՝ եթէ իր գերդաստանին «ցամաք» հաց միայն հալթալթէ. Անցեալ (1879—80 թ.) սովի կնիքը դեռ շանհետացած հողագործի ճակատից, ալսօր նոնքը սպառնում է նրան անդունդ գլորել: Անցեալ տարի հունձը անպաշտ էր, որի պատճառով ալժմ ցորենի պուղը ծախւում է 2 բ. և դեռ օր աւուր բարձրանում է. ալն սա ալնքան թանգ չէր համարւի՝ եթէ փող ճարւէր. սակայն փող չկալ, աշխատանք չկալ. դրամատէրն էլ քարացած է. Ատուած մի արասցէ, եթէ ալս տարի ևս հունձը անպաշտ լինի, ալնուհետև սովը անգթաբար կսկսի իր հունձը. ալն ժամանակ գուցէ թէ սպասուող խօրհրալի հետ կը լալտնւի և մի ալ վարակիչ հիւանդութիւն՝ որոնք ձեռք ձեռքի տւած քար ու քանդ կանեն մի քանի գաւառներ. բնութեան հետ սովին առիթ են տալիս մեծ և փոքր վաշխառուները, որոնք առատ տարիներում պուղը 30—35 կոպէկ հաւաքելով հազարաւոր պուղերից կազմած ամբարներ են գուցենում՝ ալսպիսի աղէտների ժամանակ առասպելական գնով ծախելու համար. շատ է պատահում, որ դրանք մերժում են ծախել դիմողին՝ պատասխանելով թէ «ցորէն սր տեղից»:

Մեզանում արդէն մեծ թանգութիւն է, ալն զանազանութեամբ միայն, որ մարդիկ դեռ կատաղի քաղցածութեան չեն հասած. թէ և խղճուկ-ողորմելի կերպով սակայն դեռ ապրում են՝ սրանից-նրանից կարիկցութիւն հալցելով: Զմեռը սով էր նաև «ալսի»-ի (ալչպէս է կոչւում անասունի կերակուրը). ներկալումս էլ սով է անասնեղէնի, խոտ ու դարման չլինելու պատճառով: Կեռ աշնանը դիւղացին  $\frac{1}{2}$  գնով ծախից ոչխար-տաւարի մի մասը. մնացածի մի մասը ինքը պահեց իր ունեցած ալսիով, միւս մասը սրան նրան վարձով պահ տուց. ձմեռու պիւրջը իր պահածի հաղիւ կէսը կանաչի երես տեսաւ, իսկ պահ տւածից չետ ստացաւ կամ ոչինչ կամ  $\frac{1}{2}$  ը, կմախք դարձած: Գարնան սկզբում երկրագործը եթէ սերմ էր ճարում, ցանելու համար եղ չունէր. եթէ մի կերպ եղ էր գտնում՝ սերմացու չէր ձեռք բերում. ալսպէս անելանելի էր և է գիւղացու դրութիւնը: Հողի աշխատութեան կողմից ամենաաղքատը՝ Մեծ-Ղարաքլիսան է

և որովհետև զբանով պարապելու և զբազելու միջոցը չունեն, ուստի և միւս գիւղերի հետ աւելի ալս գիւղը պանդխտողները մեծ տոկոս է տալու. որտեղ գոյութիւն ունի փոստալին երթեկութիւնը, ահետեղի ծառայողները (почтосодержатель, староста, ямщикъ) անպատճառ փամբակեցի, գլխաւորապէս Մեծ-Ղարաքիլիսեցի կը լինեն. թէ՛ որ աստիճան ապականւած ծառայութիւն է եամշխութիւնը մեղանում ալդ արդէն չպտնի է:

Կան մի քանի կտոր վիճելի հողեր՝ որոնք արքունի սեպհականութիւն են դարձել. հասարակութիւնը անազոյու կերպով մի երկու անգամ դիմել է իշխանութեան ալդ հողերը նորից ձեռք բերելու համար, սակայն առանց արժանանալու ուշադրութեան: «Հասարակութիւն» ասելով խկապէս պէտք է հասկանալ գիւղական տանուտէրներին, շինական դատաւորներին և ազդեցիկ անձնաւորութեանց, որոնք, հասարակութեան իրանց վրայ դրած հաւատարմութիւր ի չարը դործ դնելով, մինչ ալսոր նրա շահերը պաշտպանելու մէջ անշնորհ, անտարբեր և անգործ են գտնուել. ահագին դամարներ է նրանց ձեռքն անցել և, մի երկու բարեխիղճ մարդ չլինելու պատճառով, բոլորը վատնուել և գոլորշիացել է. ալդ պատճառով ալսոր նոյն իսկ հասարակութիւնը պարտքի մէջ է: Մեր «գիւղի ներքին» ալս թերութիւնների մասին կաշխատեմ մի ուրիշ անգամ խօսել:

Մեծ-Ղարաքիլիսալին հարեան «Ոսկրեաէնկալ» մալական գիւղը մի քանի տարի առաջ մօտ 150 տուն բնակիչ ունէր. ալդ գիւղի հողարւժիւնը համարեա թէ ալնքան էր որքան մեր գիւղինը. վերջին պատերազմից (1377-8) չետոյ մալականների ուղիղ կէս մասը կառավարութեան թողուութեամբ Ղարս գաղթեց մնացած կէս մասը դարձնալ տիրապետում է նոյն քանակութեան հողարածնին: Մի տեղ անհամեմատ քիչ ժողովուրդ՝ տիրապետում է անհամեմատ շատ հողի, միւս տեղ անհամեմատ շատ ժողովուրդ՝ տիրապետում է անհամեմատ քիչ հողի. Ոսկրեաէնկալի արեմտեան կողմում գտնուող մի քանի դեսեստին վարեւահողը, որը արդէն մեր գիւղի սահմանի մէջն է, նախկին ժամանակներում մեր իրաւանց տակն էր գտնուում, և ալդ դեռ ալն ժամանակ, երբ Մեծ-Ղարաքիլիսան հազիւ 200 տուն բնակիչ ունէր, Վերջին մի քանի տարիներում լիչեալ կտոր հողը դարձել է մալականների սեպհականութիւն. գէթ ալժմ, երբ մալականների մի մասը արդէն գաղթած է, արդարացի կլինէր՝ ալդ հողը եթէ նորից վերադարձնէր Մեծ-Ղարաքիլիսեցիներին: Մալականները հաւասարութիւնից դուրս շատ հող ունենալու պատճառով մեծ մասամբ հողը անմշակ են թողնում, նրա վրայից խոտ միալն քաղելով:

Ընթերցողը կարծեմ թէ համողեց, որ փամբակի ժողովուրդը կատարելապէս աղքատ է, թշւառ է, ողորմելի է քաղցածութեան աստիճանի վերալ կանգնած լինելու չափ: Բաց ինչ կը լինէր նրա դրութիւնը, եթէ բնութիւնը գէթ մի բանով չ'օժտէր նրան. և թէ և ալ օժանդակութիւնը

չատ չնչին, այլ սակայն առիթ է տալիս գիւղացուն ստակի երես տեսնել Անտառն է մեր երկրագործի լինարանը. անտառն է մեր գիւղացու ապրուստի աղբիւրը. փայտալածառութիւնը նրան միակ լուսադրողն է. արտահանում է Աղէքսանդրապոլ, Շիրակ և սրանց շրջակայքը՝ Որպէս վիչեցի, մի շօշափելի օգուտ չէ ստանում, կրքեմն մինչև անգամ ծախսը հաղիւ է ծածկում. սակայն դա մի միջոց է, որով կարողանում է իր մերկութեան, իր անհրամելտ պէտքերի մի մասը լրացնել. փայտի գնի լաւ ժամանակը սալը ծախւում է 9, 10 և 12 բուբլով. խոյ արժան ժամանակ 5—6 բուբլով. Գնալ գալը 6 օր տևում է. անտառահարկ սալին վճարում է 1 ր. 30 կ., խճուղուն 80 կ., առ ճազը 2 բուբլի էլ իր ապրանքի ուտելիքը կարժէ, ուտտի և տակը մնում է օմէջը փուչ օխտը հատիկու Զանազանութիւնը մրան նրա մէջն է, որ իր տանը կոպէկի երես չի տեսնում, աչն ինչ ալգ մի միջոց է և առիթ՝ որտեղից և գնում է իր ընտանիքի համար ամենակարևորը—ցորենը. Վերջին տարիներում տակաւն կրկնակի է՝ քան նախկին տարիներում. սրանում արդէն համեզած է ներկալ մարդասեր անտառապետը և մեր անտառապետ շրջանի պ. քննիչը (ревизоръ). և ոչ մի անտառապետութեան մէջ փաշտը պնպէս թանց չէ ծախւում՝ որպէս մեզանում. Ապպէս ահա, բոլոր վիշածս աննպաստ հանգամանքների շնորհիւ, մեր ժողովուրդը վերին աստիճանի զուրկ է մարդասպակ սպրուստ ունենալուց. բազմաթիւ ընտանիքներ զուրկ են սցամաք» հացից, Մուրալը նրանց համար կենդանի մեռնել կը նշանակէ—բայց ապրել են ոգում, որպէս վերեւում էլ վիչեցի, չկալ մէկը, որ պարտքի մէջ խեղուած չլինի. Ապպիսի անտանելի գրութեան մէջ դրամատէրը, անգութ դրամատէրը թումանին (10 ր.) ամսական 20—30 կոպէկ պակաս տոկոս չէ վերցնում, և տալիս է ոչ առանց գրաւականի. Մեջ կարծիք որ գրաւականն էլ կէս գին հաշուով, գիւղացին իր մի քանի մանէթանոց իրերը գրաւ դնելով, դեռ մինչ վերջին օրերս ապրել է. բայց ինչ կանի մի քանի օրից կամ մի քանի շաբաթից չեսու, երբ ծախելու, գրաւ դնելու ոչ մի բան չի ունենալ. Բայց երեսակայեցէք, ապպիսի տագնապի ժամանակ վրալ է հասել և հարկը. ինչպէս պէտք է վճարի,—ամբողջ ժողովուրդը մնացել է շարած:

Երբ լսում կամ կարդում ենք Տաճկաստանի քրդերի աւազակութիւնների մասին, զարմանում ենք և վայրենիների տեղ գնում նրանց. աչն ինչ աւազակութիւնը, մարդասպանութիւնը առօրեալ երևոյթ է մեզանում. օր չէ անցնում, որ գողութիւն չլալի, շաբաթ չէ անցնում մարդասպանութիւն չկատարուի, և կատարողները մեծ մասամբ թուրքերն են. սակայն թէև թուրքի անունը «բեղնամ» է, բայց գողութեան մէջ չես չէ մտում և հալը, ևս առաւել Մեծ-Ղարաքիլիսեցին վերջին տարիներումս իթէ թուրքը դողանում է մի որ և է հալի եղը, գոմէշը կամ կովը, ան-

կասկած հալը խառն պէտք է լինի. մի ժամանակ դողութեան, աւազակութեան մէջ լազոնի էր մեր հարեան Համամլի գիւղը, իսկ ալժմ Մեծ-Ղարաքիլիսան բարձր է կանգնած նրանից: Գողերը, աւազակները աչքերն իս առաջն է. գիտենք, ճանաչում ենք, երբեմն էլ բռնում ենք նրանց, սակաչն բարեկամութիւնից, խաթրից, երկիւղից և կամ անտարբեր ու անուշադիր լինելուց չենք վստահանում ձեռք տալ նրանց, որով և ապացուցանում ենք, որ ինքներս անամօթներ ենք, ինքներս նրանց պաշտպանողներ ենք, ուրեմն և՛ գող և՛ դողակիցներ, և պատճառներ ենք շարլատանների շատանալուն: Դեռ դարունը ճոր է բացել՝ ալն ինչ բազմաթիւ գողութիւններ և աւազակութիւններ են պատահել, գողանում են աղքատի մի լուծ եզը, մի լուծ գոմէշը, մի կովը, ապրելու միակ պայմանները, որի հետ կապած է նրա ընտանիքի կեանքը. և ալսպիսի անգթութիւններ Վերազ մեր գիւղական վարչութիւնները շատ թույլ և անտարբեր աչքով են նայում. միթէ կարող են արդարանալ՝ երբ գողութիւնը, սպանութիւնը լսում անսնում են՝ և խիստ միջոցների շին գիմում մերկացնելու համար. համարձակ կարող եմ ասել, որ ալսպիսի թուլութեան և անլուրջ ղեկավարութեան հաղիւ թէ մարդ երբ և իցէ հանդիպի:

13 մալիսի, 1893 թ. Մեծ-Ղարաքիլիսայ:

## II

### ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՑ

#### Յ. ՄՈՒՐԱԿԵԱՆՅԻ

Գաղթիւ և պանդխտել հալրենիքից՝—ասա ալն միակ ճանապարհը, որին գիմում է հալածւած թիւրքահալը, երբ նեղութիւններն ու տուրքերը պաշարում են նրան:

Մի կողմ թողնելով պանդխտութեան ալն հազարաւոր փորձերը, որ լինում են վերջին ժամանակներս թիւրքա-Հալաստանի ներքին կենտրոնական նահանգներից դէպի Կովկաս, Կ. Պոլիս, Ամերիկա, ես թէ ալս և թէ իմ լաջորդ նամակներովս խօսելու եմ մասնաւորապէս թիւրքահալ ալն գաղթական շարժումների մասին, որ ուղղւած են Սե-ծովի հարաւային Անատոլիական ափերից—դէպի Կովկասեան արեւելեան ափերը: